ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ 12/1

ք. Երևան 19 մարտի 2020թ.

«ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» 3.1. և 3.2 կետերով սահմանված 2 ընթացիկ քննությունների անցկացման պահանջը 2019/2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում չկիրառելու մասին

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թ. մարտի 16-ի թիվ 298-Ն որոշումը՝ 2020 թվականի մարտի 16-ից մինչև ապրիլի 14-ն ընկած ժամանակահատվածում հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին, հաշվի առնելով այն, որ նշված ժամանակահատվածում բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ենթակետով, ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, հիմնվելով հարցման կարգով քվեարկության արդյունքների վրա՝ ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. «ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» 3.1. և 3.2 կետերով սահմանված 2 ընթացիկ քննությունների անցկացման պահանջը 2019/2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում չկիրառել:
2. 2019/2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար ուսումնական պլանով նախատեսված *եզրափակիչ գնահատումով* և *առանց եզրափակիչ գնահատման* դասընթացները ավարտել մեկ եզրափակիչ քննությամբ՝ գնահատումն իրականացնելով 20 միավորանոց սանդղակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ